# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Պարուր Սևակ բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

29.11.2024**թ.** **Պարույր Սևակ բնակավայր**

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- Հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-իմասնագետ՝ Ռուզան Մակինյանը,
- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիալական հարցերի մասնագետ՝ Մարինե Վարդանյանը,
- Արարատ համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Արսեն Հակոբյանը,
- Արարատ համայնքի աշխատակազմի քարտուղար՝ Արթուր Մուսիկյանը,
- Պարույր Սևակ բնակավայրի վարչական ղեկավար՝ Լյուդվիգ Ստեփանյանը,
- «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի տնօրեն՝ Գագիկ Բաղդասարյանը,
- «Գեպոտանիք» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Արմիդա Ասատրյանը,
- Պարույր Սևակ բնակավայրի միջնակարգ դպրոցի տնօրեն՝ Լուսինե Պողոսյանը և ուսուցիչներ,
- Պարույր Սևակ բնակավայրի մանկապարտեզի տնօրեն՝ Թամարա Նիկողոսյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2024թ. նոյեմբերի 29-ին ժամը 12:00-ին Արարատ համայնքի Պարուր Սևակ բնակավայրի միջնակարգ դպրոցի դահլիճում տեղի ունեցավ բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումները վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Ռուզան Մակինյանը, ով հանդես եկավ բացման խոսքով՝ ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակում կատարելիս և հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը նախաձեռնողի կողմից լիազոր մարմին մուտքագրելուց հետո, օրենքով և կառավարության Որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է, 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համաձայն կառավարության Որոշման շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոն:

Այնուհետև Փորձաքննական կենտրոնի մասնագետը **Ռուզան Մակինյանը** ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, թե ՇՄԱԳ հաշվետվությամբ ինչ է նախատեսվում իրականացնել, ներկայացրեց կառուցապատման տեխնիկական ցուցանիշները՝ նախագծի հետ համեմատելու և տվյալները ճշգրտելու նպատակով, ինչպես նաև շինհրապարակի կազմակերպման աշխատանքները: Փորձագետը ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված ազդցությունների մեղմման վերաբերյալ նախատեսված միջոցառումները մասնավորապես՝ փոշենստեցման, շինհրապարակում անիվների լվացման հարթակի, աշխատանքների ավարտից հետո տարածքի բարեկարգման և կանաչապատման և այլնի վերաբերյալ:

**Ռուզան Մակինյանը նշեց**, որ նախատեսվող գործունեության տարածքից հեռացվել են էլեկտրահաղորդման օդային գծերի հենասյուները, սակայն ՇՄԱԳ հաշվետվության և էսքիզային նախագծով դեռ պահպանված են, առաջարկեց տեղեկատվությունը հեռացնել ՇՄԱԳ հաշվետվությունից և շտկել նաև պահպանված մյուս բոլոր տեխնիկական վրիպակները:

**Ռուզան Մակինյանը հարցրեց** հողի բերրի շերտի ծավալի հաշվարկի մասին, ՇՄԱԳ-ում ներկայացված հողի բերրի շերտի հզորությունը 0.6-0.8 մ է: Համաձայն Կառավարության 2017թ. նոյեմբերի 2-իթիվ N1404 որոշման 10 սմ և ավելիի դեպքում է հաշվարկվում և հեռացվնում հողի բերրի շերտը՝ բուսահողը:

«Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի տնօրեն Գագիկ Բաղդասարյանը պատասխանեց**, որ ներկայացված տեղեկատվությունը ճիշտ չէ և այն կշտկվի: Նախատեսվող գործունեության տարածքի կանաչապատման աշխատանքների համար օրենքով սահմանված կարգով բերվելու է սևահող:

**Պարույր Սևակ բնակավայրի վարչական ղեկավար Լյուդվիգ Ստեփանյանը** հարց բարձրացրեց կրթահամալիրի բակում նախատեսված արևային ֆոտովոլտային վահանակների տեղափոխման վերաբերյալ:

**Գագիկ Բաղդասարյանը պատասխանեց**, **որ** ինչպես առաջին հանրային լսման ժամանակ, անյպես էլ հիմա գրեթե հնարավոր չէ տեղափոխել արևային վահանակները, քանի որ նախագիծը արդեն իսկ համաձայնեցված է պատվիրատուի հետ: Բացի դրանից, այն հատվածում որտեղ առաջարկվում է տեղափոխել արևային վահանակները, նախատեսվում է տնկել մեծացող սաղարթախիտ ծառեր, ինչը կրթահամալիրի ամբողջ տարածքը կքողարկի դիմացի բարձունքում առկա հակառակորդի սահմանային դիտակետերից: Ծառերի ստվերը կնպաստի նաև արևային ֆոտովոլտային կայանի ցածր արտադրողականությանը:

**Արարատի համայնքապետարանի ներկայացուցիչները** նշեցին, որ իրենք համակարծիք են վարչական ղեկավար հետ:

**Գագիկ Բաղդասարյանը պատասխանեց**, որ մեկ անգամ ևս հարցը կքննարկվի Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ:

**Ռուզան Մակինյանը հարցրեց** ինչով է պայմանավորված արևային կայանի տեղափոխության անհրաժեշտությունը:

**Լյուդվիգ Ստեփանյանը պատասխանեց**, որ կրթահամալիրը կառուցվելու է բնակավայր մտնող հիմնական ճանապարհի մոտ և աչքի համար տեսողական այդքան էլ հաճելի չէ:

**Ռուզան Մակինյանը նշեց**, **որ** կրթահամալիրի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումը իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական եռաֆազ հաշվիչի միջոցով, ինչը կապահովի էկոնոմ և հաճելի սեզոնային ջերմություն կրթահամալիրին: Նա հավելեց, որ սա նախագծի առավելություններից մեկն է:

**Պարույր Սևակ բնակավայրի միջնակարգ դպրոցի տնօրեն Լուսինե Պողոսյանը** հարցրեց հնարավոր է արդյոք 144 աշակերտի փոխարեն 200 աշակետրի համար նախատեսել կրթահամալիրը:

**Գագիկ Բաղդասարյանը պատասխանեց**, որ համաձայն քաղաքաշինական նորմերի դասասենյակները նախատեսված են 24 աշակերտի համար, սակայն հաշվի առնելով դասասենյակների մեծ մակերեսները, խիստ անհրաժեշտության դեպքում, և ԿԳՄՍ նախարարության թույլտվությամբ հնարավոր է յուրաքանչյուր դասասենյակում տեղավորել մինչև 30 աշակերտ: Այդպիսով նոր կառուցվող կրթահամալիրում կարող են ուսանել մինչև 180 աշակերտ:

**Ռուզան Մակինյանը** նշեց, որ աղմկահարույց տեխնիկաները պետք է աշխատեն ոչ միաժամանակ, որպեսզի գումարային աղմուկը չգերազանցի նորման՝ 80 դԲ և ներառել ԲԿՊ-ում որպես աղմուկը չգերազանցող միջոցառում: Նա հավելեց նաև, որ շինարարության ավարտից հետո ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման, երթևեկության և երեխաների անվտանգության ապահովման նպատակով, անհրաժեշտ է դիմել ճանապարհները տնօրինող համապատասխան կառույցին:

Հանրային 2-րդ լսման ժամանակ բարձացված բոլոր հարցերը ընդունվեցին մասնակիցների կողմից:

Հանրային լսումներում այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

Հանրային լսումներն ամբողջությամբ լուսանկարվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Արարատի համայնքապետարանի աշխատակցի կողմից:

Արձանագրությանը կցված է հանրային լսումների մասնակիցների ցանկը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Ռուզան Մակինյան

«Նորաշեն » ՆՏ ԱԿ-ի տնօրեն՝ Գագիկ Բաղդասարյան